ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 1276-Ա

ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետով, հաշվի առնելով Դավիթ Սամսոնի Հարությունյանի (ծնված՝ 19.01.1956թ) դիմումը, «Գուգարաց աշխարհ» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, սեփականության իրավունքի վկայականը (N 929403), այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք. ***որոշում եմ***

1. Հաստատել Փամբակ համայնքի Դեբեդ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-034-0074-0002 (համաձայն սեփականության իրավունքի վկայականի) կադաստրային ծածկագրով 0,2305 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշտված սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Հողամասի սահմանները որոշվում է համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

11 դեկտեմբերի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 1277-Ա

ԱՆԴՐԱՆԻԿ ԱԼԲԵՐՏԻ ԼՈՐՏԻԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոտոսի 3-ի «Չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի կարգը սահմանելու մասին» N 920-Ն որոշումով և հիմք ընդունելով Անդրանիկ Ալբերտի Լորտիկյանի 10/12/2025 թվականի դիմումը՝ որոշում եմ.

1.Անդրանիկ Ալբերտի Լորտիկյանին անհատական սեփականության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0060-0020 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հարկի հարկային պարտավորությունները վճարելուց և օտարումից հետո առաջացած՝ 3799 (երեք հազար յոթ հարյուր իննսունինը) դրամ գերավճարը հաշվանցել և մարել Անդրանիկ Ալբերտի Լորտիկյանին անհատական սեփականության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0033-0020 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հարկի գծով 2026թ.-ի հարկային պարտավորությունը:

2. Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին՝ տասնօրյա ժամկետում իրականացնել գերավճարի հաշվանցման աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

11 դեկտեմբերի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 1278-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՊԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԳԱՌՆԻԿ ԳԱՐԵԳՆԻ ԱԲԱԶՅԱՆԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 07 մայիսի 2002 թվականի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-դ կետի 1-ին ենթակետով, Փամբակ համայնքի ավագանու 13 փետրվարի 2025 «Փամբակ համայնքի ավագանու 06 ապրիլի 2022 թվականի N 32-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 004-Ա և 13 փետրվարի 2025 թվականի «Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 14-ի N 129-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Փամբակ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 005-Ա որոշումներով, հաշվի առնելով բնակչի դիմումը, Փամբակ համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 15 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 12 նիստի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի մաս 10, խումբ 7, դաս 1, հոդված 4712-ով նախատեսված գումարից Գառնիկ Գարեգնի Աբազյանի սոցիալապես անապահով ընտանիքին հատկացել սոցիալական աջակցություն՝ ընդհանուր 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամի չափով բնաիրային փաթեթի ձեռքբերման 2 քարտի տեսքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

15 դեկտեմբերի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 1279-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՄԲԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԱՀԻՏ ԱԼԲԵՐՏԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 07 մայիսի 2002 թվականի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-դ կետի 1-ին ենթակետով, Փամբակ համայնքի ավագանու 13 փետրվարի 2025 «Փամբակ համայնքի ավագանու 06 ապրիլի 2022 թվականի N 32-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 004-Ա և 13 փետրվարի 2025 թվականի «Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 14-ի N 129-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Փամբակ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 005-Ա որոշումներով, հաշվի առնելով բնակչի դիմումը, Փամբակ համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 15 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 12 նիստի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի մաս 10, խումբ 7, դաս 1, հոդված 4712-ով նախատեսված գումարից Անահիտ Ալբերտի Մելքոնյանի սոցիալապես անապահով ընտանիքին հատկացել սոցիալական աջակցություն՝ ընդհանուր 60.000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամի չափով հիվանդանոցային ծախսերի փոխհատուցման տեսքով՝ համաձայն ներկայացված հաշիվ-վավերագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

15 դեկտեմբերի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 1280-Ա

06-070-0063-0114 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՍԽԱԼԸ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թվականի N 698-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024 թ. թիվ 845-Ա որոշումը, Փամբակ համայնքի ավագանու 28 օգոստոսի 2024 թվականի N 096-Ա որոշումը, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգը, հիմք ընդունելով Ռոբերտ Ռազմիկի Անանյանի և Գահանե Ժորայի Անտինյանի, դիմումը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ.***

1.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 06-070-0063-0114 կադաստրային ծածկագրով 0,14 հա անշարժ գույքը Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի կադաստրային քարտեզում սխալի հետևանքով նշված է որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս, առաջացող նպատակային և գործառնական նշանակության անհամապատասխանությունները ուղղել և հաստատել որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս (հիմք միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացություն, մարզպետի որոշում, Փամբակ համայնքի ավագանու որոշում, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշում):

2.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

17 դեկտեմբերի 2025, գ. Փամբակ